BAKER TILLY
ARMENIA

22 Hanrapetutyan Street,
Area 16, 5th floor
0010 Yerevan
Republic of Armenia
Tel: +374(10) 582-487
Tel: +374(10) 582-478
Fax: +374(10) 562-404
www.bakertillyarmenia.com
Email: info@bakertillyarmenia.com

23 Մարտ 2009

N 0194

ՀԱՄՏԱՏՈՒՄ ԵՄ

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն

Փ.Գևորգյան

Աուդիտորական ծառայությունների իրականացման
լիցենզիա թիվ 054՝ տրված ՀՀ ֆինանսների
և էկոնոմիկայի նախարարության կողմից

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԷԵՓՖ» ունիվերսալ վարկային կազմակերպություն
սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերության միակ մասնակից՝ «ՀԷԵՓՖ»
Փոխատվական Հիմնադրամին

Մենք անկախ աուդիտի ենք ենթարկել «ԷԵՓՖ» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2008թ. տարեկան հաշվապահական հաշվեկշիռը, ինչպես նաև՝ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ հաշվետվությունները: Այս ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է «ԷԵՓՖ» ունիվերսալ վարկային կազմակերպության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում կարծիք արտահայտել ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի ստանդարտներին (աուդիտի ազգային ստանդարտներին և գործնական փորձին) համապատասխան: Համաձայն այդ ստանդարտների պահանջվում է, որ մենք աուդիտը նախագծենք և իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տվյալների և բացահայտումների բաղադրիչների հետազոտումը՝ թեսթային հիմունքներով: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների, ընկերության ղեկավարության կողմից իրականացվող կառավարման և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը: Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների ընթացքում հավաքագրվել են բավարար և իրական տեղեկություններ, որոնց արդյունքները հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

BAKER TILLY
ARMENIA

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Մեր կարծիքով, 2008թ. տարեկան հաշվապահական հաշվեկշիռը, ինչպես նաև՝ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները բոլոր էական առումներով արժանահավատ են և տալիս են ճշմարիտ ու իրական պատկերը «ԷԵՓՖ» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ֆինանսական վիճակի մասին, իսկ հաշվապահական հաշվառումը Ընկերությունում վարվում է «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի և ՀՀՀՀՍ-ի պահանջներին համապատասխան:

Փոխ.տնօրեն
Աուդիտոր

Խ.Բեգլարյան